ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «Ավանի մսուր-մանկապարտեզներ» ՀՈԱԿ-ի h.52, h.56, h.57 մսուր-մանկապարտեզ հիմնարկների դաստիարակների (համապատասխանաբար 2,34, 1,17, 2,34 դրույք), h.55 մսուր-մանկապարտեզ հիմնարկի ֆիզկուլտուրայի հրահանգչի՝ 0,5 դրույք, h.51, h.53, h.54, h.57 մսուր-մանկապարտեզ հիմնարկներիի երաժշտության դաստիարակների (համապատասխանաբար 0,5, 0,75, 0,75, 0,75 դրույք) թափուր հաստիքների համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում(Ձև1),մեկ լուսանկար 3x4 չափի,

-կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև4),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող թաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ.-ի սեպտեմբերի 25-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026թ.-ի հոկտեմբերի 27-ին՝ ժամը 10:00-ին, «Ավանի մսուր-մանկապարտեզներ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Երևան, Խուդյակով 222: